

ԻՂ. ԱՐՈՒԼԱԾԵ

ՌՈՒՍՅԱՎԵԼՈՒ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

Երբ խոսքը վերաբերում է Ռուսթավելու դարաշրջանի վրաց գրականության արձագանքներին հին հայ գրականության մեջ, բնական է, որ ունենդիրն առաջին խոսքն սպասի հենց Ռուսթավելու մասին, նրա ստեղծագործության արձագանքների մասին՝ հայերենում։ Բայց, դժբախտաբար, Ռուսթավելու դյուբակյան քնարի ձայնը դեռևս չի լսվում հին հայ գրականության մեջ, և այս հանգամանքը, անշուշտ, իր պատճառներն ունի։

Վրաստանի ու Հայաստանի (ավելի ճիշտ՝ Հայաստանի հյուսիսային և ներքին կողմերի) միջև աննախընթաց սերա հարաբերությունն հաստատունաց հետո, հայոց այն ժամանակվա գրական շրջանները, որոնք զարգանում էին զլխավորապես հոգևորականության հովանավորության առկա, վրաց գրականության իրականության մեջ կամա թե ակամա ծանոթանում էին, առաջին հերթին, իրենց բնույթով և հոգուն ամենտհարմար երկերին։ Իր կողմից՝ Վրաստանի հասարակության համապատասխան մասն էլ հայկական իրականության մեջ էր հետաքրքրվում, փնտրում էր դրանք նրա մեջ համախոհ խավեր, որոնց միջոցով կկարողանար ծանոթանալ հայոց գրական ստեղծագործությանը, ինչպես և տարածել իր դադափարախոսությունը նաև հարևան հայերի մեջ։ Հայկական այդ միջավայրն իր պաշտոնական դավանության մեջ վրացականից տարբեր էր, ուստի նրանց հանդիպումն էլ խաղաղ չէր կարող լինել։ Վրաց հոգևորականությանը՝ հայ հասարակության մտքին իշխողների դեմ դադափարախոսական կոիվ հարուցելու համար, որ ստեղծված պատմական հանգամանքներով անհրաժեշտություն էր հանդիսանում, հարկավոր էր հենարան, և այդ բանը հասարակության նույն շերտում գտնվեց ի դեմս «երկարնակներին»։ Հայ հոգևորականության մինչ այդ անհրաժեշտ մասը, որն իր գոյությունը հնից էր սաանում¹, այժմ նույնադաս վրաց կեկեցեցու գրական գանձարանից դադափարախոսական գեներ է ստանում ալլադավան հայրենակիցների դեմ պայքարելու, որպեսզի այդ ձանապարհով համապատասխան ասպարեղ ու ազդեցություն գրավի հայրենի երկրում։

* Թբիլիսիի Պետհամալսարանի դոցենտ Իլիա Արուլաձեն այս դասախոսությունը հայերեն լեզվով կարդացել է Երևանում, 1937 թ. դեկտեմբերի 24-ին։ Նմբ.

¹ H. Март, Арк'аун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах. «Виз. Временник», т. XII, СПб, 1905.

Եւման գրութիւնն այս կամ այն կերպ մերձեցնում էր իրար հետ Վրաստանի ու Հայաստանի այն ժամանակվա որոշ շրջանները: Վրաստանի այս շրջանը գաղափարախոսութիւնը և այն արտահայտող գրականութիւնը, իհարկէ, հայ գրական հասարակութեան մեջ մտնում էին թարգմանութիւնների միջոցով: Կարեքն ու նպատակը սահմանում էին լուսնդակութիւնը, և այդ պատճառով հայերէնում մենք ունենք ոչ թե ամեն տեսակի եկեղեցական գրականութեան արձագանքներ, այլ ամենադժբախտի, այն է՝ հիշյալ ժամանակի փոխառնակական գրականութեան և դավանաբանական ու բանավիճական բնույթ կրող գրվածքների արձագանքները: Նրանցից մի քանիսը, որքանով, եթէ կարելի է ասել, «գերդավանական» բնույթ ունենին, հայ գրականութիւնն ընդունեց առհասարակ, ինչպէս հիշյալ Կարաշրջանում, Նույնպէս և ապագայում, իսկ մի քանիսը կամ ժամանակավորապէս ընդունեց և կամ մերժելու դիպքում պատասխան տվեց:

Կրկնում ենք՝ թե առաջինն և թե երկրորդին հայ գրական շրջանները ծանոթացան միմիայն մի հնարավոր միջոցով՝ թարգմանութիւններով: Խնչ ևն այս թարգմանութիւնները, վրաց դասական գրականութեան հուշարձաններից որքան են ծանոթ եղել հայերը հնում, այս է մեր այսօրվա զեկուցման առարկան:

*
*
*

Վրացերէնից հայերէն թարգմանութեան պատմութեանն առայժմ հնարավոր է հետեւել մեր թվականութեան IX դարից: Դեռևս հայտնի առաջին լրիվ թարգմանութիւնը, որ հասել է մեզ, «Դիոնեսիոս Արիոպագացու կյանքն»¹ է: Այդ թարգմանութիւնը կատարել է ոմն Հովհաննէս բժիշկ՝ 880-ական թվականներին, Երուսաղիմ քաղաքում: Հուշարձանն այդ մասին տեղեկութիւններ տալիս է մեզ վերջում, հիշատակարանի ձեով: Նույնիսկ նոր ժամանակի հայ ակնավոր հետազոտողներից մեկին՝ Ն. Ակիւնյանին՝ դարմանք պատճառեց այս հիշատակարանում աղճատված կերպով ներկայացված անունն այն լեզվի, այսինքն վրացերէնի («վրական»-ի կամ «փոխական»-ի փոխարեն՝ «փոխական»), որից դա թարգմանված է, ինչպէս այդ երևույթն առաջին անգամ նշեց բելգիացի գիտնական P. Peeters-ը: Նրան այդ բանն անհավատալի թվաց: Իսկ դա, մեր կարծիքով, արդյունք պիտի լինի այն տարածված մի հայացքի, որի համաձայն՝ հայերը, իրրեք քրիստոնեական կուտուրայի տեր ազգերի հարեաններ, նրանցից անմիջականորեն էին վերցնում իրենց համար ընդունելի հուշարձանները՝ հակառակ վրացիների, որոնք այդպիսի հարեանութիւնից ու սերտ կապերից համեմատաբար զուրկ էին: Վրացիները, սկզբնական շրջանում, համեմայն գեպս, իբր թե via armeniaca էին կապված այդ աշխարհի օջախների հետ: Նույն այդ բելգիացի հետազոտողին, որը «փոխական» բառն իրավացիորեն գիտեց իրրեք վրախան կամ վրախան բառի աղճատում՝ վրացերէն հուշարձանի հրատարակութեան ժամանակ, բնագրային վերլուծման և հայերէնի հետ համեմատելու ճանապարհով հաջողվեց հաստատել իր հայացքի ճշմարտութիւնը և, այդպիսով, որոշ չափով խորտակել նաեւ հիշյալ անհաստատ տեսակետի հիմքը:

¹ Վրացական տեքստն ուսումնասիրութեամբ հանդերձ հրապարակեց P. Peeters-ը (տե՛ս Analecta Bollandiana XXXIX, էջ 277—313, Bruxelles, 1921), իսկ հայկական տեքստը՝ Ն. Ակիւնյան (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», էջ 641—660, 205—218, Վիեննա, 1918/14):

Դրանից առաջ նույնպիսի անվստահություն արժանացավ և մի այլ խոշոր հայագետի՝ Հ. Տաշյանի կողմից նաև այն տեղեկությունը, որ թարգմանիչը՝ ոմն Սիմեոն Վանական՝ կցել էր Հովհաննես Պետրիժիի մեկնություններով օժտված Պրոկլ Դիադոխոսի «Շաղկապ աստուածաբանութեան»-ի հայկական թարգմանությունը։ Թարգմանչի այն հավաստումը, թե Դիադոխոսը «ոչ էր թարգմանեալ ի մերս լեզու... և ես յայն սակս թարգմանեցի, զի մի պակաս եղիցի սա յազգէս մերմէ», մեծ բանասերը կասկածելի համարեց։ Թարգմանիչը չգիտէ, ասում էր նա, այլապես անկարելի է, որ Պրոկլը զրվածքը հունարենից վերցրած չլինեին հայերը հնում՝ թարգմանված այլ փիլիսոփաների երկերի հետ։ Պրոկլի հայերեն թարգմանության հնագույն օրինակն իսկապես այդպիսին համարեց¹։ Ակադ. Ն. Մառը հերքեց այդ պնդումը։ Նա վերահիշյալ հուշարձանի հայկական հին օրինակը վրացերենից կատարված թարգմանություն օրինակներից լավագույնը համարեց², իսկ այդ հաստատումը վաղուց հնարավորություն տվեց գիտությունը հրաժարվելու այն հին հայացքից, թե հնում անկարելի էր վրացերենից հայերեն թարգմանություններ կատարել։

Այսպիսի վերաբերմունք ստեղծվեց այն հուշարձանների նկատմամբ միայն, որոնք վրացական ստեղծագործություն չեն հանդիսանում, իսկ վրացական ստեղծագործություն հանդիսացող և հնում հայերենի թարգմանված այնպիսի մի հուշարձան, ինչպիսին է «Պատմութիւն Վրաց» կամ «Գարթլիս Յիսովրերա»-ն, ընդհանրապես որեւէ կասկած չի հարուցել։ Սա պիտի թարգմանված լինի XII դարի երկրորդ կեսում։ Նա ընդհատվում է 1125 թվի զեպքերով, Դավիթ Շինողի պատմության մի էպիգոգով³։ Դժբախտաբար մինչև այսօր նրա շարունակությունը ոչ մի տեղ չի երևում։

Մինչև վերջին ժամանակներս սրանով սպառնում էր այն հուշարձանների թիվը, որոնք վրացերենից հնում թարգմանվել են հայերենի։ Շատ չի անցել այն ժամանակից, երբ Գ. Զարբհանալյանի նկարագրած⁴ մի ուրիշ, հնում հայերենի թարգմանված փիլիսոփայական բնույթի հուշարձանի վրացերենից թարգմանված լինելու աներկբայությունը և նրա բնագրի ինչ լինելու հարցը քննարկեց⁵։ Այն հուշարձանը Հովհաննես Դամասկացու «Աղբիւր դիտութեան» («գիւլեկտիկա» և «ալանդութուն») երկն է։ Գ. Զարբհանալյանը, որ նկարագրել է այս հուշարձանի հայերեն թարգմանությունը, բերում է նաև նրա հիշատակարանը, ըստ որի դա վրացերենից է թարգմանված Սիմեոնի ձեռքով, սակայն և ավելացնում է. «Չենք կրնար որոշել միայն անվամբը, թարգմանչին անձը հայտնի, ինչպես և ոչ ժամանակը. ասանկ ալ, թե ամբողջ գրոցը թարգմանիչն է, թե՞ անոր մեկ մասին

¹ Ն. Տաշյան—Պրոկլի հնագույն օրինակը. «Մասնագրական մանր ուսումնասիրություններ», մասն 1, Ե, էջ 147—161։

² Н. Марр, Иоани Петрицкий, грузинский неоплатоник XI—XII века, СПб, 1909, էջ 13։

³ Համառոտ պատմութիւն վրաց, ընծայեալ Ջաւահիրի պատմչի, Վենետիկ, 1884։

⁴ Գառ. Զարբհանալյան—Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց դար Դ—ԺԳ, Վենետիկ, 1889, էջ 576—579։

⁵ Н. Абуладзе. Древнеармянский перевод еще одного памятника грузинской философской литературы эпохи Руставели («Сборник Руставели», изд. Института Языка, Истории и Матер. культуры им. акад. Н. Я. Марра, Тбилиси, 1938, стр. 129—137)։

միայն» (էջ 579): Նրա նկարագրության մեջ արված նշաններից պարզվեց, որ այս հայերեն թարգմանությունը կատարված է Արսեն Վաչեսձեի հունարենից վրացերենի թարգմանած տեքստից: Իսկ իբրև թարգմանիչ անվանված Սիմեոնին նույնացրինք Պետրիժիի մեկնություններով օժտված Պրոկլ Դիագորիոսի «Շաչկապ աստուածարանութեան» երկի թարգմանիչ Սիմեոն Վանական Պրենձահանքեցու հետ (Древнеармянский перев., էջ 133):

Մեր այդ նախնական հաղորդման մեջ մենք հնարավոր էինք համարում, որ այս հուշարձանի օրինակները պահվեն Երևանի ու Էջմիածնի ձեռագրերի հարուստ հավաքածուներում: Եվ իսկապես, այդ մեզ հաջողվեց: Մեր ձեռքի տակ են առաջմ հայերեն թարգմանությունն առանձին կտորները և ծանոթացել ենք նաև ձեռագիր օրինակներին: Մի քանի օրինակներում ներկայացված է միայն վերելում հիշատակված Հովհաննես Դամասկացու հիմնական աշխատությունը (Երև. № 611, էջմ. №№ 101, 102, 5789), իսկ մի քանիսի մեջ ուրիշ հոգվածներ էլ կան ավելացված (Էջմ. №№ 63, 103, 116, 5859), որոնք բոլորը Հովհ. Դամասկացուն են վերագրված: Արսեն Վաչեսձեի հունարենից կատարած թարգմանության վրացերեն ձեռագրին ևս կցված են այլ հոգվածներ: Այդ ըսվ պատճառով հարց ծագեց՝ արդյոք հայերեն հոգվածներն էլ վրացերենից չե՞ն թարգմանված: Վրացերենից թարգմանելուն վերաբերող հիշատակարանին հանդիպում ենք հիմնական աշխատության («Աղբիւր գիտութեան») վերջում: Դրա համար էլ առանձին ուսումնասիրության նյութ դարձավ այդ հարցը, իսկ դրա լուծման միակ հնարավորությունը վրացերեն-հայերեն տեքստերի բնագրային վերլուծումն է: Հայերենի հետ համեմատելու համար վրացերենից վերցրինք այն ձեռագրերը, որոնք պահպանել են Արսեն Վաչեսձեի թարգմանած Հովհ. Դամասկացու հիմնական աշխատությունը՝ «Աղբիւր գիտութեան»: Վերջինիս և նրան կցված այլ հոգվածների միջև վրացերենում թեմաթիկ միասնություն գոյություն ունի: Բոլորն էլ դոգմատիկական-փիլիսոփայական բովանդակություն ունեն: Այդ պատճառով էլ այս ժողովածուն «Դոգմատիկոն» է կոչվում գիտական գրականության մեջ, Պրոֆ. Կ. Կեկելիձեի ուսումնասիրության համաձայն¹, «Դոգմատիկոն»-ի վրացերեն խմբավորություն կազմողը, նրա մեջ ներկայացված բազմաթիվ ծանոթ հեղինակների և անանուն հեղինակների աշխատությունների թարգմանիչ Արսեն Վաչեսձեն, նույն Արսեն Իդալթոնիլին է, որն ուրիշ նյութերի հետ թարգմանել և իր «Դոգմատիկոն»-ի մեջ առաջին տեղը տվել է Հովհ. Դամասկացու «Աղբիւր գիտութեան»-ը: Թվով վեց են այն հոգվածները, որոնք Հովհ. Դամասկացու հիմնական աշխատության հայերեն թարգմանությանը կցված են որոշ ձեռագրերում: Դրանք են՝ 1. Բանք յաղագս Հոովմայեցւոյ, թէ որպէս եղեն անմիաբան ի սոցանէ, չորից եկեղեցեաց. զսա Եւսարատի զրեալ Նիկիոյ մետրապոլիտն. 2. Պատասխանի առ Հրէայն. 3. Բանք վասն հաւատոյ և ընդգիծադրութիւն Նեստորիոսի. 4. Բանք ընդդիմականք ի քակտումն հերձուածոց Յակոբիկ ասորոց. 5. Վասն որ ի Բրիստոս .բ. բնութեանց և այլ ամենայն բնութեանց ի քննութեանց ինքնեաց համառօտեալ. 6. Պատասխանի առ Հայս համառօտեալ:

¹ Պրոֆ. Կ. Կեկելիձե—Վրաց գրակ. պատմությունը (վրաց.), I, էջ 293—300, Թբիլիսի, 1923:

Չնայած նրան, որ առաջին հոգվածի հեղինակ է անվանված Եվստրատ Նիկիո մետրապոլիտը, հայ թարգմանիչը կամ արտադրիչն այն ևս Հովհ. Դամասկացուն է վերագրում: Այս հոգվածի խորագիրն էլ, մյուսների նման. սկսվում է նույն բառով: Այսպես է վարվում նա, ինչպես սաորև կտիւնհնք, մյուս հոգվածների նկատմամբ ևս, որոնք կամ ուրիշ և կամ անանուն հեղինակի են պատկանում:

Վերոհիշյալ բոլոր հողավաճները համապատասխանը կա «Դոգմատիկոն»-ի վրացիներն իմբադրուեթյան մեջ: Սակայն այստեղ հովհ. Դամասկոսցին չի հաշտարարված բոլոր հողավաճները հեղինակը և ոչ էլ այն հաճութեան հանությամբ ևն գետեղված, ինչ որ հայերենում է: Վրացիներն «Դոգմատիկոն»-ի ցուցակներն իրար համադրելով ուսումնասիրել է պրոֆ. Կ. Կեկելիձեն¹, որը Արսենի կազմած և նրա թարգմանածն է համարում ցուցակներում ներկայացված նյութի մեծագույն մասը: Վրաց ինչ գրականության հետազոտողը Արսենի «Դոգմատիկոն»-ի հետագա ժամանակի սրբապրեչների կողմից մացված է համարում հետևյալ հողավաճները՝ «Եվստորաա Նիկիոս մետրապոլիտի հակակաթոլիկական աշխատությունը եկեղեցիների բաժանման առթիվ և նմանապես քրիստոնեացած հրեաներին, մահմեդականներին ու հավատադարձ հայ հակադասներին հեղեցի ընդունելու կարգը»: Քանի որ Եվստորատի աշխատությունը կա նաև հայերեն թարգմանության մեջ, զրանով հաստատվում է, որ հայ թարգմանիչը ձեռքի տակ ունեցել է Արսեն Վաչեսաձեի հավիլավոր վրացիներն «Դոգմատիկոն»-ը: Այստեղից պարզվում է նաև այն, որ այդպիսի հավիլավոր «Դոգմատիկոն» վրացիներն զոյուեթյուն է ունեցել արդեն XIII դարում, որովհետև նրա հայ թարգմանիչ Սիմեոնը, որին Պետրիժի մեկնությունն ունեցող Պրոկ Դիագոստոսի «Շաղկապ աստուածաբանութեան» թարգմանիչ Սիմեոն Վանականի հետ ևնք նույնացնում, այդ դարի առաջին կեսի գործիչ էր:

Երկրորդ հոգվածը՝ «Պատասխանի առ Հրէայան», որին համապատասխանում է վրացերեն «Դոգմատիկոն»-ի «սոցիալական»՝ Յերոնիմ Գիմարտի հոգվածը, բառացիորեն հետևում է վրացերենին։ Մակայն դա, բացի վրացերեն այդ հոգվածից, պարունակում է նաև մի ուրիշը, այն է՝ «սոցիալական» ցանցով լիցիտացիոնալ Յերոնիմ...⁴ Այսպիսով, հայերենը մի խորագրի տակ վրացերեն «Դոգմատիկոն»-ի երկու գլուխների թարգմանությունն է պարունակում։ Հայերենում դրանք, ինչպես և մնացած բոլորը, հովհ. Դամասկացուն են վերագրված։ Նորին Վոլհաննիսի» — այսպես է սկսվում սույն հոգվածը։ Մինչդեռ վրացերենում այս հոգվածներն անանուն հեղինակների աշխատությունների շարքին են պատկանում⁵։

[illegible]

¹ Պրոֆ. Կ. Կեկելիմե—Վրաց գրակ. պատմ., I, էջ 293—295:

Նույն տեղը, էջ 300:

³ Վրաստանի թանգարանի ձեռագրերի S ֆոնդ № 1463, 226 ր.—246 ր.:

Նույն տեղը, 246 Բ.—252 Բ.:

Գրոթ. Կ. Կեկելիմե—Վրաց գրակ. պատմ., I, էջ 300.

Վրաստանի Թանգարանի ձեռագրերի S ֆոնդ № 1463, 103 ր.—108 ր.:

* Տեխնիկապետ հնարավոր չեզալ վրացերեն որոշ բառերում պահել հին ուղղագրու-
թյունը հմբ.

տևում է նույն խորագրով վրացերեն ընագրին, սակայն դա էլ նախորդի նման շարունակում է վերջինիս հաջորդող հոդվածը, որ է՝ «Նորին հօրն Ֆովն. Դամասկացւոյ... Բանք վասն քակտման Նեստորականաց» («სიტყუაი დასამხობელი ხესტორიანთაი»)¹։ Դրանք վրացերենում էլ Հովն. Դամասկացուն են համարվում նույնիսկ խորագրում։ Հայերենում հոդվածի խորագրին սկսվում է այսպես՝ «Նորին հօրն մերոյ Ֆովհաննու Դամասկացւոյ Խրիստենեկտար կոչեցելոյ»։ Համարյա այսպիսի բառերով է սկսվում նաև վրացերենը՝ «წმიდათაგანისა მამისა ჩუენისა იოანე მონაზონისა და ხუცისა დამასკელისა ოქრონეკტარად წოდებულისაი»։

Զորորդ հոդվածն է՝ «Բանք ընդդիմականք ի քակտումն հերձուածոց ֆակորիկ ասորոյ»-ը, որը վրացերենի «სიტყუაი ნამუშავეი დასამხობელად... წვალეობასა იაკობთაი»-ին է բռնում², նույնպես բառ առ բառ հետևում է նրան։ Երկուստեք էլ նրանք Հովն. Դամասկացուն են հայտարարված, նրանց խորագրի սկիզբն էլ համարյա միևնույնն է՝ «Ֆովհաննու Դամասկացւոյ Խրիստենեկտարի» — «მისივე იოანე ხუცისა დამასკელისა ოქრონეკტარად სახელდებულისაი»։

Հինգերորդ հոդվածը՝ «Վասն որ ի Քրիստոս .բ. բնութեանց և այլ ամենայն բնութեանց ինքնեաց համաուտեալ» — վրացերենում համապատասխանում է «Դոգմատիկոն»-ի «ქრისტეს შორის ორთა ნებათათუის და მოქმედებათა და სხუათა ბუნებითთა თვითებათა გარნა შე მოკლებული...» գլխին³։ Սա ևս բառ առ բառ հետևում է վրացերենին։ Սա ևս, նախորդ երկուսի հետ մեկտեղ, Հովն. Դամասկացուն է հայտարարված խորագրի առաջին իսկ բառերով, ինչպես հայերենում, այնպես էլ վրացերենում։ Այդ բառերն են հայերենում՝ «Նորին Ֆովհաննու Դամասկացւոյ», իսկ վրացերենում՝ «მისივე» (նորին), այսինքն՝ Հովն. Դամասկացունը։ Արսենը բավարարվել է միայն մի բառով, քանի որ նախորդ հոդվածը, իրից, Հովն. Դամասկացուն է հայտարարված։

Այս բոլոր հոդվածները բառացի թարգմանություն են վրացերենից. միմիայն վեցերորդ հոդվածը՝ «Պատասխանի առ Հայս» բոլորովին տեղ չունի վրացերեն «Դոգմատիկոն»-ում, բացառությամբ դրա մեջ դեռ տեղված մի մասի, որը միաբնակ հայերի մեղադրության «գլուխներն» է պարունակում։ Վրացերենում այդ մասը ներկայացված է առանձին վերնագրով՝ «თავნი სომეხთა წვალეობისანი ოცდაათნი»⁴։

Թեև սրտեղից են առնված այս մասի սկզբի և հաջորդ տեղերը, դուռև չի հայտաբերվում։ Հնարավոր է, որ այդ բանը թարգմանիչը լինի համառոտած ուրիշ հատվածից կամ հոդվածներից, եթե նկատի ունենանք, որ խորագրի վերջին բառը՝ «համաուտեալ» թարգմանչին է և ոչ ընտելինը։ Զորմանալի չէ՛ր լինի, եթե թարգմանիչը ընտելի մի քանի հոդվածը մի հոդվածով տար, քանի որ այդ, ինչպես վերևում էլ տեսանք երկրորդ և

¹ Վրաստանի Թանգարանի ձեռագրերի S ֆոնդ № 1463, 108 v.—116 v.

² Նույն տեղը, 116 v.—128 v.

³ Նույն տեղը, 128 v.—138 v.

⁴ Նույն տեղը, 224 v.—226 v.

երրորդ հոգվածների առթիվ, նրա համար սովորական էր: Հայերենում այս հոգվածն էլ, ինչպես մյուս բոլորը, Հովհ. Դամասկացուն է վերագրված: «Նորին Յովհաննու Դամասկացու» — ասում են խորագրի առաջին բառերը: Իսկ վրացերենում եղած մասն անանուն հեղինակի է երևում¹:

Այսպիսով, Հովհ. Դամասկացու «Աղբիւր դիտութեան»-ի հայերեն թարգմանությանը կցված 6 հոգվածները, համարյա առանց պակասորդի, գտնվում են Արսեն Վաչեսձեի «Դոգմատիկոն»-ի մեջ: Վերջինիս ութ հոգվածները, համեմայն ղեպս, պարզ երևում են հայերենի հիշատակված հավելյալ հոգվածներում: Դրանք բոլորն էլ, հնայած որ դուրկ են թարգմանությունը վկայող հիշատակությունից, թարգմանությունն են հանդիսանում Արսեն Վաչեսձեի թարգմանած և կալմած «Դոգմատիկոն»-ի համապատասխան տեքստերի, ինչպես այդ հաստատվում է մեր ձեռքին եղած հայերեն օրինակների բնագրային համեմատությամբ վրացերենի հետ:

Հստ վրացերեն բնագրի՝ այս հոգվածներից չորսն են Հովհ. Դամասկացունը, մեկը՝ Եվսարատի Նիկիո մետրապոլիտինը, իսկ մնացած երկուսը (վրացերենում երեքը)՝ անանուն հեղինակների: Հայերեն թարգմանության մեջ բոլորն էլ Հովհաննես Դամասկացուն են վերագրում, բայց այստեղ թյուրիմացության անդիք կա և ոչ թե բնագրի ինչ որ յուրահատկության:

Հովհ. Դամասկացու աշխատությունների ձեռագրերն ուսումնասիրելու ժամանակ Իջմիածնի Մատենադարանում իմացանք, որ գոյութուն ունի հնում վրացերենից թարգմանված մի հուշարձան ևս՝ Հովհ. Սինայցու «Կղեմաքս»-ը: Ձեռագրերում որոնելուց հետո զբաղից երկու օրինակ երևում են եկալ. մեկը հին (XIII դ.), մյուսը՝ համեմատաբար ուշ ժամանակի: Թե մեկը և թե մյուսը պակասավոր են՝ առաջինն ավելի, քան երկրորդը: Այս հուշարձանը վրացերենից հայերենի թարգմանելուն վերաբերող տեղեկանքը պահպանված է երկուսի մեջ էլ քսաներորդ գլխի վերջում: Այստեղ գրված է. «Թարգմանե[ա]լ է մինչև ցաստ ի սրբամիտ կրանաւորէ Մինասէ Սիւսկեցէ (var. Սիւսկեցէ) ի Տրապիզոն քաղաք: Իսկ աստուստի Սիմէոն քահանայ (var. քահանայէ) կրանաւորէ վրաց բարբառով (var. բառով):»

¹ Պրոֆ. Կ. Կեկելիձե — Վրաց գրականության պատմություն, 1, էջ 300:

Հետագա սրբադոմեններից պարզվեց, որ «Պատասխանի առ Հայս» (հրատարակված է «Վոյս»-ի 1905—1906 թ.թ. համաբնորում, Բ. Կյուլեսերյանի ձեռքով) գրված է ինչպես և Ն. Ալիևյանը նկատեց («Կիւրիոն կաթողիկոս Վրաց», էջ 69—70), «հայ-հոռոմի» ձեռքով, որն իր աշխատության համար, ինչպես վերև նշեցինք, օգտագործել է «Դոգմատիկոն»-ի որոշ նյութեր: Մեր կարծիքով այս «հայ-հոռոմը» վրացերենից թարգմանող Ռիմենո Պրնձա-հանքեցին է: Սիմեոնի գործունեության ժամանակը մոտավորապես հայտնի է՝ XIII դ. առաջին կեսի գործիչ է երևում:

Նա ու նրա նմանների (կարելի է ենթադրել, որ Ռիմենոն մինակ էր «հայ-հոռոմներից», որոնք երկարնակների բանակին էին պատկանում և պայքար էին ծավալում հակառակորդների դեմ իրենց հայրենի հողի վրա) աշխատությունը դիմագրության է հանդիսանում հայ-մոնոֆիզիտ (միաբնակ) գործիչների մեջ, որոնց այն ժամանակվա առաջնորդներից մեկը՝ Միսիթար Դոշը՝ «Պատասխանի առ Հայս»-ի դեմ, մեր կարծիքով՝ գրել է իր հայտնի քննախոսությունը, որը կարելի է «Պատասխանի առ Վիրս» անունով կոչել («Արարատ»-ի 1900—1901 թ.թ. համաբնորում՝ «Թուղթ Միսիթար վարդապետին, որ Դոշն կոչվւր»): Եթե դիտողությանս մեջ չենք սխալվում, այն ժամանակ «Պատասխանի առ Հայս» գրված պիտի լինի XIII դ. հենց սկզբին (մանրամասնորեն ան հոգվածս՝ «Միսիթար Դոշի տրակտատը «Վասն Վրաց» և նրա գրական աղբյուրները», վրացերեն, Թբիլիսիի Համալսարանի Աշխատությունները, № 7, էջ 97—108, 1938 թ.):

Հովհաննես Սինայեցին VII դարի առաջին կեսի գործիչ է։ Նրան է պատկանում մեկ լավականին մեծ աշխատություն ճշմարտական, բարոյական գրականության մեջ, որը «Կղեմաքս» կամ «Սանդուղք» է կոչվում։ Պրոֆ. Կեկելիձեի ասելով, այս հուշարձանի հինգ խմբագրություն է կղեր վրացերենում — առաջինը՝ մինչև X դարը (մեղ չի հասել), երկրորդը՝ եվթիմե Աթոնելունը, երրորդը՝ Հովհ. Պետրիժինը, չորրորդը՝ Պետրե Գելաթելունը և հինգերորդը՝ Անտոն I-ինը¹։ Երրորդը և հինգերորդը չափածո են կատարված, մնացածները՝ արձակ։ Արձակներից էլ Պետրե Գելաթելունը Փոս պատրիարքի մեկնություններն ունի²։

Հայերենում «Կղեմաքս»-ը արձակ է թարգմանված։ Պարզ է, որ այդ իսկ պատճառով մենք այն, այսինքն 21-րդ գլխից սկսած մասը, որի վերաբերյալ հիշատակարանն ասում է, թե վրացերենից է թարգմանված, պետք է համեմատենք վրացերեն արձակ թարգմանությունների հետ։ Դրանք եվթիմե Աթոնելու և Պետրե Գելաթելու թարգմանություններն են։ Վանի որ հայերենը մեկնություններ չունի, նկատի ունենալով եվթիմե Աթոնելու խմբագրությունը համարել հայերեն թարգմանության բնագիր, սակայն բնագրային համեմատությունից պարզվեց, որ հայերենի թարգմանիչը՝ Սիմեոն Վանականը՝ Պետրե Գելաթելու թարգմանությունն է վերցրել իրեն բնագիր, այն էլ միայն «Կղեմաքս»-ի բնագիրը և ոչ մեկնությունները, որոնք, ինչպես վերը նշեցինք, Փոս պատրիարքին են պատկանում։

«Կղեմաքս»-ին, ինչպես վրացերեն ձևագրերում, այնպես էլ հայերենում կցված է Հ. Սինայեցու հատուկ հոդվածը, որը «მწყეპნისადმი», հայերենում «Առ հովիւն» է կոչվում։ Ուսումնասիրողները դա համարում են «Կղեմաքս»-ի երկրորդ մասը։ Վրացերեն թարգմանությունների հետ մեր կատարած համեմատությունը ցույց տվեց, որ այս մասն էլ հայերենի է վերածված։ Պետրե Գելաթելու թարգմանությունից «Կղեմաքս»-ին հայերենում կցված են նաև հետևյալ հոդվածները՝ 1. [Կեանք և քաղաք] վարութիւն երանելի սուրբ հաւրն [մերոյ Յովհաննու հաւրն] Սինէի՝ որ կոչէր Կղեմաքս [զոր պրեպոստիանիէլ կըլանաւորն միակեց Ռայիթոյ լիւրին. և 2. Լուծմունք զմուսարթմաց և նուրբ բանիցն, որ կան ի գիրքս յայս կոչեցեալ Կղեմաքս արարեալ Դանիէլ Կրանաւորի Ռայիթեցոյ։ Վասն լիւրն աշխարհէ։ Սրանց համապատասխանը կա նաև վրացերենում։ Պետք էր սպասել, որ այս հոդվածներն էլ վրացերենի այն խմբագրության մեջ կրկան գային, որի մեջ հայերեն «Կղեմաքս»-ի և «Առ հովիւն»-ի հետ կապված աեքստերը երևան եկան, այսինքն՝ Պետրե Գելաթելու թարգմանության մեջ։ Սակայն Պետրե Գելաթելու թրիլիսիում գտնվող օրինակում³ ձեռք է, այս հոդվածներից առաջինը՝ «Յովհ. Սինայեցու քաղաքավարութիւնը» կա, բայց հայերեն թարգմանությունը ոչ թե նրան է հետևում, այլ եվթիմե Աթոնելու թարգմանությանը։

¹ Prof. K. Kékélidzé—Auteurs étrangers dans l'ancienne littérature Géorgienne (Թբիլիսիի Համալսարանի Տեղեկագիր, VIII, էջ 155, 1927)։

² Պրոֆ. Կ. Կեկելիձե—Վրաց գրակ. պատմ., I, 352։

³ Մի օրինակում միայն՝ № 5258, մյուսում սրա փոխարեն կա՝ «Վարդան վարդապետի լուծմունք սուրբ զրոյ» (№ 5093, 250 rec.)։

⁴ Վրաստանի Թանգ. ձեռագր. A ֆոնդ, № 39։

Սույն հոգւածի լրիվ խորագիրը վրացերէն ընագրում հետեւյալն է. «Սոփոքըն Միւրիսա ըն ճիւղարիս թաւիս ի սինել մաթասեղոսիս, մոմ-
լոթընտա ցանտէլմուլոս, խլոտա ցանմանտլոցեղոս ըն յիւմարիտալ
սանտրեղոս, ռոմեղոս ցեց ալմիւրա ըն իւր մոնաշոնման ռաիտեղոման»¹։
Հայերէնի կրկնորդ հոգւածն էլ, «Լուծմունք դժուարիմայ քանից...», նույնպէս
նվթիմն Աթոնսիւլու է վերցրել հայ թարգմանիչը, ինչպէս այդ հաստատ-
ւում է ընագրային համեմատութեամբ։ Սույն հուշարձանի լրիվ խորագիրը
վրացերէն ընագրում այսպէս է. «տարցմանցն ժնիւր ցլուլոսնմ[ի]ս ցլուլոս
ամիս Միւրիսա իւրիւրտաւոյն; ցաւոսլոցնտաւոյն խլոլոտ»²։ Այսպիսով, հայ
թարգմանիչը, Սիմեոն Վանականը, «Կղեմաքս»-ը և նրան վերաբերող աշ-
խատութիւնները թարգմանիչիս օգտագործել է իր ժամանակ գոյութիւն
ունեցող այս աշխատութիւնների վրացերէն կրկնութիւններն
էլ, ինչպէս Պետրոս Գլաթսիւլու, այսպէս էլ նվթիմն Աթոնսիւլու։

* *

Վրացերէնից հայերէնի թարգմանւած վերոնշեալ հուշարձանների մեծ
մասը, ինչպէս տեսանք, Սիմեոն Վանականն է կատարել Սիմեոնի ով լի-
նելու մասին այս հուշարձանների հիշատակարաններում եղածից բացի՝ ու-
րիշը չգիտենք։

Ամենաընդարձակը և առավել տեղեկութիւններ պարունակողը Հովհ.
Պետրոսի մեկնութիւններով օժտւած՝ Պրոկլ Դիաքոնիսի «Շաղկապ սո-
ստաւարանութեան»-ի հիշատակարանն է։

«Թարգմանեցաւ»՝ զիբւ, որ է շաղկապ՝ և գլուխ աստուածարանութեան
Պրոկլէ Դիաքոնիսի պղատոնական իմաստասիրի, ձեռամբ Սիմեոնի տնայտան
Բանանայ կրօնաւորի՝ ի վրաց լեզուէ ի Հայ լեզուս. յերկիրս Հայկոց ի վանս
Վրաց, որ կոչի Պղնձաւանք»³։ յաւիտեանից քալաւանին ՅԶԾԶ։ Այսպէս զձեզ,
ով եղբարք, զի յոյժ աշխատութեամբ թարգմանեցի։ Նախ զի ոչ էի արժանի
այսպիսի սպասաւորութեան սակս շաղկապ[ա]լ զով մեղօք. կրկնորդ՝ զի յոյժ
ծերացեալ էի և սկարացեալ յաշտօց և ի մտօց և ի գորութենէ. զի զԿ.
ամենիւր⁴ էի. ալ զի ոչ եր թարգմանեալ իմեռս⁵ լեզու և սա է մայր աստուա-
ծարանութեան առաջին. Մովսէս՝ զայս ուսեալ զգլուխութիւն և ի սորա բա-
նիցն կարգեալ զիւրն աստուածաբանութիւն. և Դիոնիսիոս և Արիպագա-
ցին⁶ Նոթիէոս զիւրեալն զիւրեալն ընդ իմեռս ընդ իմեռս ի մեռնէ գրեցին նույնպէս
և Գրիգոր Աստուածաբան զիւրն աստուածաբանութիւնս ի մեռնէ խօսեալ
է։ Եւ ըրրորովիւր նորքս զամենայն աստուածաբանութիւնս իւրեալն զի
սմին ուրումանց բանիցս ընդ իմեռս։ Եւ սա է հիմն և արմատ և մայր ամե-

¹ Վրաստանի Թագաւորանի ձեռագր. ֆոնդ, № 236, 3 է.

² Սույն ֆոնդի № 445. 4 է.

³ Ձեռագրերում թարգմանեցաւ։

⁴ Ամենայն ձեռագրում շղակապ։

⁵ Սույն ձեռագրում կրօնօրի։

⁶ Ձեռագրերում՝ Պղնձաւանք։

⁷ ամեայ—էջմ. № 1832 ձեռագրում։

⁸ Սույն անդ՝ մեր։

⁹ Ամենայն ձեռագրում (էջմ. № 1500)՝ Մովսէս, իսկ № 1832-ում՝ Մօսէս։

¹⁰ № 1832-ում՝ Արիպագացին։

նայնի. ի սմանէ առին նոքա բովանդակ: Իսկ այնք փոքր հատորք ելով: և ես յայն սակս թագմանեցի¹ զի մի պակաս եղիցի սա յոգգես մերմէ: Արդ աղաչեմք² որք կարգայք կամ օրինակ առնոյք, յիշեսջիք յաղօթս և զիմ փոքր բանքս զրեցէք զկնի և մի ինչ թողուցուք ի սմանէ»:

Սույն հիշատակարանի ընդգծած ակզերից երեւում է, որ Սիմեոնը եղել է հայ և քահանա—կրօնավոր, վրաց լեզվի գիտակ, թարգմանել է այս աշխատութիւնը 1248 թվին, Հայաստանում, «վրաց վանքում»՝ Պղնձահանքում, այն ժամանակ, երբ ինքը օտարեկան ծերունի է եղել: Մյուս հուշարձանների հիշատակարաններում թարգմանիչը հիշատակվում է կամ միայն անունով (Ինչպես Հովհ. Գամսակացու աշխատութիւնների հիշատակարանում) և կամ՝ անունով ու կոչումով (Ինչպես «Կլեմէքս»-ի հիշատակարանում): Գանի որ անունն ու կոչումը համընկնում են գլխավոր հիշատակարանում հիշված թարգմանչի անվան ու կոչման հետ, մենք հավանական ենք համարում, որ այդ անվան և կոչման տակ պետք է ներկայացված լինի գլխավոր հիշատակարանում հիշատակված Սիմեոնը: Այս բոլոր հուշարձաններն էլ բավականաչափ նմանութիւն ունենալու պատճառով միևնույն դարաշրջանում, միևնույն անձնավորութեան կողմից պիտի լինեն կատարված:

Ինչ վանք է այն «վրաց վանք» կոչվածը, որտեղ Սիմեոնը թարգմանել է «Շաղկապ Աստուածարանութեան»՝ Վրացի եղբայրութիւնից կազմված վանք նկատի ունի այստեղ Սիմեոնը, թե՛ վրացական գավառների հայերի վանք: Որտեղ էր գտնվում այս մենաստանը, որ Պղնձահանքում: Ահա այն հարցերը, որոնք ծագում են բնութեցողի համար վերահիշյալ հիշատակարանին ծանոթանալուց հետո: Մինչև վերջերս սպասիչ կերպով որոշված չէր, թե որ Պղնձահանքն էր՝ Բջնոն, թե՛ Լոռու, որտեղ թարգմանվեց սույն հիշատակարանն ունեցող հուշարձանը, բայց նորիս հայտարարված ձևագրի հիշատակարանից՝ (սրի արտագրող Սիմեոն կրօնավորը Պրոկ Դիաղոխոսի երկի թարգմանիչ Սիմեոնը պիտի լինի) պարզ երևում է, որ այդ Պղնձահանքը Լոռու Պղնձահանքն է, որը Բջնու Պղնձահանքի հետ XII—XIII դարերում երկայնաբաղուկների (Մարգարէներ) տիրապետութեան սահմաններում էր գտնվում: Ինչպես վերև բերված հիշատակարանն է վկայում, Պղնձահանքում եղել է «վրացական» վանք, լինելու դա միայն վրացի վանականներից կազմված, թե՛ վրացադավան հայերից, միևնույն է: Ավելի հավանական է, որ երկու աղբից էլ կային այնտեղ, որոնք երկաթնակ էին: Վրացական մենաստանների կյանքի տրագիկիան այս կողմից ոչ մի տեղ ազդային սահմանադրում չէր դնում: Բավական էր, որ միևնույն գավառութիւնն ունենային, առավել ևս՝ վրաստանի նկատմամբ վասալական կախման մեջ գրտնվող այն ժամանակվա Հայաստանի կողմերում: Հայոց դրավելու ձևաարկութեան մեկն էր այդ ժամանակ վրացական կամ վրաց դավանանքի եկեղեցի-վանքերի ճաղկեցումը երկայնաբաղուկների տիրապետութեան սահմաններում: Վրացական երկաթնակ գաղափարներն այս կենտրոնների միջոցով էին տնցնում և տարածվում հայոց շրջաններում, որտեղ կային արտադիր, ընդունող տարրեր, հենց թեկուզ հանձին նույն այդ Սիմեոն Վա-

¹ Ձևագրերում՝ թարգմանեցի:

² Աղաչեմ—Ն՝ 1832-ում:

³ Պրոֆ. դր. Լ. Մելիքսեյ-Լեգ—Վրաց ազգայնական Հայաստանի և հայերի մասին հատ Բ., էջ 67:

նականի, որը չէր խուսափում նույնիսկ երկարակ երկերի թարգմանությունից (օր. Հովհ. Դամասկացու աշխատություններն ու նրանց կցված այլ հոգովածները և, հատկապես՝ «Պատասխանի առ Հայոս»): Միայն երկարակ հայր և ոչ այլ ոք հանձն կառնեք թարգմանել «Պատասխանի առ Հայոս»-ի մեջ ներկայացված «Երեսուն գլուխներ հայ հերձվածողների դեմ» հոգվածը, որը միաբնակ հայերի գովանություն թիրախն էր դարձել:

Վրացական պետականությանը ծառայող գաղտնիարախոսական ղեկավարի՝ վրացական եկեղեցու այս երկերին առանց պայքարի չէին հանդիպի հայոց միաբնակ եկեղեցու ղեկավարները: Այդ պարզ երեւում է Երկայնա-րադունների տիրապետության սահմանների այն ժամանակվա գործիչ, անվանի Մխիթար Գոշի մի ընդհանուր դրվածքից՝ թղթից, որն ուղղված է վրացական եկեղեցու և արքունիքի մարդկանց, հատկապես Երկայնա-րադուններին՝ Թամար և Դավիթ թագավորներին հանձնելու համար: Անշուշտ, Սիմեոնի նամաններին նկատի ունի Մխիթարը, երբ ասում է. «Արդ յայտնի է, զի որք ի Հայոց ի Յոյնս կամ ի Ղիւրս դառնան վասն վառաց աշխարհի է և վասն հեշտութեան մարմնոյ...»: Այսպիսով, Սիմեոնն այն հայերից է, որոնք, չնայած այսպիսի դնահասականի, աշակերտել են վրացական եկեղեցուն, ուսումնասիրել այն ժամանակվա վրաց գրականությունը և նրանից հանել աչքի ընկնող, գլխավորապես փիլիսոփայական-բարոյա-գիտական բովանդակություն ունեցող հուշարձանները:

Այն դրվածքները, որ թարգմանել է Ասմեոնը, անշուշտ, պատահաբար չեն ընկել նրա ձեռքը: Դրանք որոշ նախապայմաններով են ընտրված: Պրոկլ Դիա-գոխոսի «Շաղկապ»-ը, Հովհ. Դամասկացու «Գիտության աղբյուր»-ը, Հովհ. Սինայեցու «Կլեմաս»-ը առավել զբաղիչ դրվածքներ էին միջին դարերում: Այն հանգամանքը, որ վրացերենում Դամասկացու և Սինայեցու աշխատու-թյունները մի քանի խմբագրությամբ են ներկայացված եղել իր ժամա-նակ, ընդհանուր է, որպեսզի պատկերացնենք, թե որքան մեծ էր վրացոց ուղադրությունն այդ աշխատությունների նկատմամբ: Ղերջիներին ոչ միայն սոսկ թարգմանությունն են տվել հին փիլիսոփա գրույները, այլև նրանց համար ծանոթագրություններ և հատուկ մեկնություններ էլ են գրել (օր. Իսանե Պետրիժիի՝ Պրոկլի աշխատության մեկնությունը): Սի-մեոնն էլ մի կողմից՝ այսպիսի ծանոթագրություն-մեկնություն ունեցող հուշարձանի է ձեռք մեկնում, իսկ մյուս կողմից՝ որոշ խմբագրություն է ընտրում թարգմանելու համար Որ ընտրություն է տեղի ունեցել, այդ պարզ երեւում է նաև նրանից, որ երբ Սիմեոնը Հովհ. Սինայեցու «Կղե-մաս» և «Առ հովիւն» աշխատությունների Պետրե Գիւթիւն խմբագրու-թյունն է վերցնում, միաժամանակ, այդ նույն խմբագրության մեջ մասնա-ճանաչել Մոնագոնի «Հովհ. Սինայեցու կյանքը» և «Կլեմասի դժգուր բառե-րի բացատրությունը» Եվթիմի Աթոնելու խմբագրությունից է վերցնում: Մի բան գոնե իրեն հիմնական գիծ է նկատվում նրա ընտրության մեջ. հիմնական աշխատությունները, ինչպիսիք են Պրոկլ Դիագոխոսի «Շաղ-կապ»-ը, Հովհ. Դամասկացու «Գիտության աղբյուր»-ը և Հովհ. Սինայեցու «Կլեմաս»-ը, նա վերցնում է որոշ պարզից դուրս եկած վրաց գործիչնե-

րի թարգմանություններից: Այդ այն դպրոցն է, որը վրաց գրականության զարգացման մեջ Պետրիժինի դպրոցն է համարվում:

Պետրիժինի լեզուն և ոճը բավականին պարզ ընտրող է նախ ակադ. Ն. Մառ¹ և ապա պրոֆ. Կ. Կեկելիձեն², որն ընդհանուր դժեբով հետևյալ ձևով է տալիս այդ դպրոցի բնութագիրը. «Այս դպրոցը,—գրում է վրաց հին գրականության հետազոտողը,—նպատակ է դնում ոչ միայն նյութական մոտիկություն պահպանել հունական բնագրի հետ, այլ նաև լեզվական. նա ցանկանում է միաբեր հաղորդելիս վրացական լեզուն բարձրացնել հունական լեզվի ձևերին: աստիճանին և դրա համար էլ այս դպրոցի հնչյունաբանությունը, ստուգաբանությունը (հեղինակը, անշուշտ, ձևաբանությունը նկատի ունի—Ի. Ա.), շարահյուսությունը և բառապաշարը կառուցված են հունական նորմաներով և թափված են հունական կաղապարի մեջ: Այս դպրոցի լեզուն վերահիշյալ պատճառով էլ այնքան ծանր է, դժբախտ—սքոլաստիկ, ոչ հեշտ հասկանալի, որ տեղ-տեղ ընթերցողը հունական բնագրին ավելի հեշտ կհասկանա, քան վրացերեն թարգմանությունը»:

Եթե այս տեսակետից հայերեն թարգմանությունը համեմատենք վրացական բնագրի հետ, չենք կարող տեսնել, թե հայ թարգմանիչն այնպես է վարվել, ինչպես օրինակ՝ Իոանն Պետրիժին կամ Արսեն Վաչեսձեն են հնթարկվում իրենց բնագրերին, հրը նրանք աշխատում են հաղորդել թարգմանելիքը ոչ միայն հունարենին «նյութական մոտիկ, այլև լեզվականորեն»: Բնագրի լեզվական յուրաքանչյուր երանգը, հասկանալի է, հայերենում չենք գտնում. այստեղ նյութական (բովանդակային) մոտիկությունն է ավելի աչքի ընկնում, քան որևէ այլ կողմ: Իսկ եթե թարգմանության մեջ ֆրազային ղուգաճկություն ենք գտնում, ապա այդ պետք է բացատրել այն ընդհանուր հատկություններով, որ ունեն հին վրացերենը և հին հայերենը: Այդ իսկ պատճառով դարձանալի չէ Գ. Զարբհանալյանի դիտողությունը Հովհ. Դավանակացու վրացերենից (Արսեն Վաչեսձեից) թարգմանված՝ մի ճառի (Նորին հօրն մերոյ Յոհաննու Դավանակացու Սրբաբանության) հոգևորականության հաշտության և ընդգիմագրության նեստորիոսի) առթիվ, որ նա «հարթ ոճով է, որպես թե հայերեն շարագրած ըլլա» (Գար. Զարբհանալյան) — Մատենադարան հայկական թարգմանություններից նախնական, Վենետիկ, 1889, էջ 579): Մական լեզվական կողմի մանրամասն բնագրային վերլուծում կատարելուց հետո հնարավոր կլինի այդ հարցին լրիվ կերպով պատասխանել, մի բան, որ թողնում ենք հետազային. իսկ առայժմ հաստատ կարելի է ասել, երբեք չենք տեսնում մեր ձևերի տակ եղած սակավաթիվ նմուշներից, որ եթե հայ թարգմանիչը մեծ մասամբ Պետրիժինի դպրոցից դուրս եկած թարգմանություններին է նախընտրություն տվել, ապա դրա պատճառն այն է, որ դրանք բոլոր կողմերից՝ թե նյութի և թե ձևի, մոտիկ էին հունական բնագրերին:

* * *

Առայժմ սրանք են այն արձագանքները, որ գտնում ենք այս դո-

¹ Н. Марр. Иоани Петрипский, груз. неоплатоник XI—XII века, СПб. 1909, էջ 33—36.

² Պրոֆ. Կ. Կեկելիձե—էություններ վրաց հին գրականության պատմությունից, «Թբիլիսիի Պետական տարանի Աշխատություններ», I, էջ 109 (վրացերեն):

³ Տես վերև, էջ 7—8.

բաշխանում հայ գրականության մեջ. դրանք մեծ մասամբ վրացական փիլիսոփայական, դավանարանական գրականությունն են:

Հետագա ուսումնասիրությունները թերևս հայտարարեն նաև իրեն՝ Թուրքափելու անմահ «Վաղրենավորի» մասնակի կամ լրիվ թարգմանության հետքերը, որի հույսը մենք չենք կորցնում:

И. В. Абуладзе

Отзвуки грузинской литературы эпохи Руставели в древнеармянской литературе

(Резюме)

Наряду с политической и экономической сближенностью между грузинами и армянами в эпоху Руставели замечается и тесная связь на литературном фронте. Свидетелями этому могут служить древнеармянские переводы с грузинского. Переводятся главным образом памятники философско-богословского и догматико-полемиического содержания, которые в большинстве в свою очередь являются переводами с греческого. Подбор такой литературы обуславливался современным положением вещей.

До сих пор был известен лишь один перевод с грузинского, а именно — „Богословские начала“ Прокла Диадоха с комментариями грузинского философа XI в. Иоанна Петрицкого. Научное освещение этого перевода принадлежит акад. Н. Я. Марру.

Занятия в Музее рукописей Арм. ССР (в Эчмиадзине) дали мне возможность обнаружить и другие переводные памятники с грузинского на армянский язык, которые, что весьма интересно, относятся к одной и той же эпохе и к одной и той же среде. Главные из них: „Источник Знания“ (Πηγή γνώσεως) Иоанна Дамаскина и „Климакс“ (Κλίμαξ) Иоанна Синайского.

Армянские рукописи как первого, так и второго сочинения снабжены соответствующими записями переводчика (который везде именуется Симеоном), повествующего о том, что эти переводы сделаны с грузинского. Переводы, как это показывает сличение с оригиналом, сделаны с особых редакций, существовавших в то время на грузинском языке. Философское сочинение Дамаскина переводится по редакции Арсена Вачесдзе (XII в.), а „Климакс“ по редакции Евфимия Афонского (X в.).

Вместе с упомянутыми памятниками в рукописях часто попадают еще и другие сочинения, имеющие близкую связь с основными. Хотя они особыми записями переводчика и не снабжены, но текстуальное сличение с соответствующими груз. памятниками показывает, что и они являются переводами с грузинского.

Среди них имеется одно сочинение „Ответ армянам“, которое по всем признакам принадлежит перу какого-то анонимного армян-

ского автора, диофизита по исповеданию, как это правильно заметил Н. Акинян, но не перу Дамаскина, как это по заглавию полагал издатель этого памятника Б. Кюлесерян. По нашему мнению, под этим автором можно подразумевать Симеона Пгндзаһанкского (из Лори), переведившего упомянутые философско-богословские и догматико-полемиические трактаты.

Переводы основных трудов Дамаскина и „Климакса“, как и сочинения Прокла Диадоха, вместе с толкованиями Иоанна Петрицкого нашли вскоре распространение и вне армянских диофизитских кругов (где они впервые появились) и сделались (главным образом последние) общим достоянием всей армянской литературы последующих времен.